ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.07.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/163

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Գավառի համայնքապետարան
Մասնակից՝ «Ակորդ գրուպ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Ակորդ գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Քոյլոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, Գավառի քաղաքապետարանի կարիքների համար կանգառների ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 07.07.2020թ.-ի թիվ 26/26-1/10141-2020 գրությամբ «Ակորդ գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Գավառի համայնքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 01.07.2020թ. թիվ Մ-408 գրության հիման վրա, 07.07.2020թ.-ին «Ակորդ գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 07.07.2020թ.-ին:

07.07.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, հրապարակվել է www.gnumner.am կայքում և տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/163 համարի ծածկագիրը:

15.07.2020թ.-ին և 24.07.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 15.07.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 24.07.2020թ.-ին:

2. Գավառի համայնքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Գավառի համայնքապետարանը 01.07.2020թ. թիվ Մ-408 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է հետևյալը.

«Գավառի քաղաքապետարանի կարիքների համար կանգառների ձեռք բերման նպատակով 2020 թվականի հունիսի 15-ին հայտարարվել է N ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-20/4 ծածկագրով գնանշման հարցման մրցույթ: Մրցույթին մասնակցել է նաև «Ակորդ գրուպ» ՍՊԸ-ն /ՀՎՀՀ՝ 03553061/: Հայտերի գնահատման արդյունքում պարզ է դարձել, որ «Ակորդ գրուպ» ՍՊԸ-ն ներկայացրել է ամենացածր գնային առաջարկը, սակայն ներկայացրած հայտում բացակայել է հայտի ապահովումը /հավելված 3/: Սահմանված ժամկետում «Ակորդ գրուպ» ՍՊԸ-ն չի ներկայացրել երաշխիքի բնօրինակը, ինչպես նաև իր կողմից ներկայացրած հավելված 1-ում թաքցրել է իրական շահառուների մասին տվյալները՝ խախտելով ՀՀ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 9-րդ, 19-րդ

ենթակետերը, 67-րդ կետի և հրավերի փաթեթի 4.3 կետի 4-րդ ենթակետի ու 7.1 կետի պահանջները:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի խնդրում եմ «Ակորդ գրուպ» ՍՊԸ-ը ներառել գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-20/4» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Ակորդ գրուպ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Ակորդ գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 07.07.2020թ.-ին գրությամբ դիմել է «Ակորդ գրուպ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.07.2020թ.-ի թիվ 26/26-1/10141-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակցի ներկայացուցիչը ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

« 1.1. Գավառի քաղաքապետարանը (այսուհետ՝ Պատվիրատու) 15.06.2020 թվականին հայտարարել է ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-20/4 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև Ընթացակարգ), Գավառի քաղաքապետարանի կարիքների համար կանգառների ձեռքբերման նպատակով:

1.2. Ընթացակարգի հանձնաժողովը հայտերի բացման նիստում որոշում կայացրեց Գնումների կազմակերպման կարգի 41-րդ կետի հիմքով 1 աշխատանքային օրով կասեցնել նիստը և «ԱԿՈՐԴ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը հնարավորություն տալ շտկելու արձանագրված անհամապատասխանությունը, այն է՝ ներկայացնելու երաշխիքի բնօրինակը և այն էլ մինչև 23.06.2020 թվականի 17:00: Հիմք՝ 22.06.2020 թվականի թիվ 2 արձանագրություն:

1.3. Ընթացակարգի հանձնաժողովը որոշեց «ԱԿՈՐԴ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության հայտը գնահատել անբավարար և մերժել հրավերին պահանջներին չհամապատասխանելու հիմքով Հիմք՝ 24.06.2020 թվականի թիվ 3 արձանագրություն:

1.4. Ընկերության կողմից ընթացակարգը բողոքարկվել է և այս պահին ընթանում է «ԱԿՈՐԴ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության բողոքի քննությունը, ըստ որի խնդրել ենք պարտավորեցնել հանձնաժողովին 1 աշխատանքային օրով կասեցնելու հայտերի բացման և գնահատման նիստը՝ հնարավորություն տալով «ԱԿՈՐԴ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը շտկելու արձանագրված անհամապատասխանությունը, այն է՝ հայտի ապահովման ներկայացումը:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: (...):

ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-20/4 ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու հրավերի 4.3. կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Սույնի վերլուծությունից պետք է փաստել հետևյալը, որ մասնակիցը հայտի ապահովումը կարող է ներկայացնել երկու եղանակով կամ կանխիկ փողի տեսքով կամ բանկային երաշխիքով: Այն դեպքերում երբ հայտի ապահովումը ներկայացված չէ, ապա հանձնաժողովը արձանագրելով անհամապատասխանությունը մեկ աշխատանքային օրով

կասեցնում է նիստը հնարավորություն տալով մասնակցին շտկելու արձանագրված անհամապատասխանությունը, այսինքն ներկայացնելու հայտի ապահովումը: Ընդ որում Օրենսդիրը չի սահմանել այնպիսի դրույթ, որով հանձնաժողովին հնարավորություն ընձեռնի անհամապատասխանության շտկման առաջարկով մասնակցից պահանջել իր նախաընտրած ձևի հայտի ապահովում, այլ նախատեսել է միայն հայտի ապահովման ներկայացման մեկ աշխատանքային օրյա ժամկետ տրամադրելու հնարավորությունը:

Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը, որ ընթացակարգի շրջանակում «ԱԿՈՐԴ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտում ընդհանրապես բացակայում է հայտի ապահովումը և հանձնաժողովը նիստը կասեցնելով պետք է հնարավորություն տար շտկելու արձանագրված անհամապատասխանությունը կասեցված ժամանակահատվածի ընթացքում այլ, ոչ թե մինչև հաջորդ օրը 17:00, և ներկայացնելու հայտի ապահովումը, այլ որ թե երաշխիքի բնօրինակը, սակայն չգիտես ինչու հանձնաժողովը «ԱԿՈՐԴ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունից պահանջել է ներկայացնելու երաշխիքի բնօրինակը սահմանափակելով մասնակցի իրավունքները և ստեղծելով անհարկի խոչընդոտներ: Նշվածի պարագայում պետք է արձանագրել հետևյալը, որ «ԱԿՈՐԴ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը չէր ստանձնել պարտավորություն ներկայացնելու երաշխիքի բնօրինակ, որի չկատարման հիմքով էլ Պատվիրատուն պահանջում է Ընկերությանը ներառել գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, այլ Ընկերությունը ստանձնել է ներկայացնելու հայտի ապահովում և եթե էլեկտրոնային եղանակով ներկայացրած լիներ բանկային երաշխիքը, որից հետո սահմանված ժամկետում չներկայացներ դրա բնօրինակը ապա նոր միայն Պատվիրատուի պահանջը հիմնավոր կլիներ: Ընթացակարգի հանձնաժողովի ոչ իրավաչափ վարքագծի արդյունքում սահմանափակվել է մասնակցի իրավունքները և դրանով պայմանավորված սույն ընթացակարգի նախաձեռնումը իրավաչափ չէ, ավելին հանձնաժողովի գործողությունները բողոքարկված են, որի բավարարման դեպքում նույնպես սույն ընթացակարգը ենթակա է մերժման, ավելին Պատվիրատուն չի մատանանշել այն իրավական հիմքը, որը հանգեցնում, է սույն ընթացակարգի նախաձեռնմանը, այսինքն նշված չէ Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված, որ իրավական հիմքերով է Ընկերությունը ենթակա գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելուն, և իրավական անորոշության պարագայում դիրքորոշում հայտնելն էլ հնարավոր չէ, սակայն կրկին անգամ նշեմ, որ մասնակիցը ուներ հայտի ապահովման ներկայացման պարտավորությունը, որի չկատարումը նոր միայն կարող

էր հանգեցնել սույն ընթացակարգի նախաձեռնմանը, իսկ հայտի ապահովումը կարող էր ներկայացվել և բանկային երաշխիքի և կանխիկ փողի տեսքով, և եթե հանձնաժողովը մեկ աշխատանքային օրեով կասեցնելով հայտերի բացման և գնահատման նիստը, հնարավորություն տար Ընկերությանը ներկայացնելու հայտի ապահովումը, այլ ոչ թե հստակ նշեր թե դրանցից որն է ուզում, ապա Ընկերության իրավունքները չէին սահմանափակվի և դրա չկատարման մեջ առկա չէր լինի Ընկերության մեղքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի համաձայն՝

1. Պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

2. Մեղքի բացակայությունն ապացուցում է պարտավորությունը խախտած անձը:

3. (...):

Սույն իրավական նորմից հետևում է, որ եթե առկա է պարտապանի պարտավորության խախտում և դրանում բացակայում է նրա մեղը, ապա նա ազատվում է պատասխանատվությունից: Վերոհիշյալ հիմնավորումների շրջանակում պետք է փաստել, որ Ընկերության մեղքը հայտի ապահովման ներկայացման մեջ բացակայում է, ուստի նա չի կարող ենթարկվել պատասխանատվության, քանզի նրա գործողությունները բխել են հանձնաժողովի ոչ իրավաչափ վարքագծից, մասնավորապես հայտի ապահովման տեսակների սահմանափակմամբ:»:

Առաջնորդվելով վերոգրյալով, Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է մերժել «Ակորդ գրուպ» ՍՊԸ-ին գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգը:

4. <u>ՍՑ-LO-2020/163 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Գավառի համայնքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Գավառի քաղաքապետարանի կարիքների համար կանգառների ձեռքբերման նպատակով 15.06.2020թ.-ին հայտարարվել է «ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման

ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ակորդ գրուպ» ՍՊԸ-ն:

ii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 22.06.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ հայտերի գնահատման նիստի արդյունքում պարզ է դարձել, որ «Ակորդ գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում բացակայում է հրավերի հավելված 3-ը /հայտի ապահովումը/:

iii. Նույն արձանագրության 3-րդ և 3.1-րդ կետերի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, որոշել է կասեցնել նիստը՝ «Ակորդ զրուպ» ՍՊԸ-ին առաջարկելով 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Հիմք ընդունելով հրավերի փաթեթի 1-ին մասի 4.3-րդ կետի 4-րդ ենթակետը, 8.9-րդ և 8.10-րդ կետերը՝ գնահատող հանձնաժողովին ներկայացնել երաշխիքի բնօրինակը մինչև սույն թվականի հունիսի 23-ը, Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

iv. Նույն արձանագրությամբ որոշվել է հանձնաժողովի նիստը հրավիրել 2020թ.-ի հունիս 23-ին, ժամը 17:00-ին՝ ք. Գավառ, Գր. Լուսավորիչի 12, երկրորդ հարկ, 8-րդ աշխատասենյակ հասցեում:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.06.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ «Ակորդ գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը գնահատվել է անբավարար և մերժվել /բացակայում է հավելված 3-ը՝ հայտի ապահովումը/:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.07.2020թ.-ի թիվ 26/26-1/10141-2020 գրությամբ «Ակորդ գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է

պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը

տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝

1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք.

3) քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից.

4) օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով.

5) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելու հետևանքով.

6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով.

7) անհիմն հարստացման հետևանքով.

8) քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով.

9) այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնց հետ օրենքը կամ այլ իրավական ակտը կապում է քաղաքացիական իրավական հետևանքների առաջացում:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է **մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը նշված օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով, հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ

կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (21.05.2020թ.-ի թիվ 778-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի հաստատած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված լինելու դեպքում՝ հայտի ապահովում և այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ընդ որում՝ որոշ բացառություններով, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի Հրավերի 4.3-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Գավառի համայնքապետարանի կողմից Գավառի քաղաքապետարանի կարիքների համար կանգառների ձեռքբերման նպատակով 15.06.2020թ.-ին հայտարարված «ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Ակորդ գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում բացակայել է հրավերի հավելված 3-ը /հայտի ապահովումը/: Հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, որոշել է կասեցնել նիստը՝ «Ակորդ զրուպ» ՍՊԸ-ին առաջարկելով 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Հիմք ընդունելով հրավերի փաթեթի 1-ին մասի 4.3-րդ կետի 4-րդ ենթակետը, 8.9-րդ և 8.10-րդ կետերը՝ գնահատող հանձնաժողովը Մասնակցին առաջարկել է ներկայացնել երաշխիքի բնօրինակը մինչև սույն թվականի հունիսի 23-ը, Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

«Ակորդ գրուպ» ՍՊԸ-ի կողմից հայտի ապահովում չի ներկայացվել, որի արդյունքում վերջինիս ներկայացրած հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն մեկ փաստաթղթի համար՝ գնային առաջարկի, ընդ որում՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանություններն ենթակա են շտկման՝ հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին էլեկտրոնային եղանակով ուղարկված ծանուցման ստացման պահից հաշված մեկ աշխատանքային օրյա ժամկետում:

Վերոնշյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը (ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Օրենսդիրը, արձանագրված անհամապատասխանությունների շտկում ներկայացնելու պարտականության կատարման համար սահմանելով այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 1 աշխատանքային օրյա ժամկետ, գնման գործընթացի մասնակիցներին ընձեռել է այն օբյեկտիվ ժամանակահատվածը, երբ վերջիններս կարող են իրացնել Օրենքով և Կարգով սահմանված՝ հայտի ապահովում ներկայացնելու պարտավորությունները: Ուստի սահմանված պատասխանատվության միջոցները կարող են ի հայտ գալ միայն սահմանված ժամկետի ավարտմամբ կամ մասնակցի կողմից այնպիսի գործողություններ կատարելու արդյունքում, որոնք վկայում են վերջինիս կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հրաժարվելու մասին:

Վերոգրյալների հաշվառմամբ, Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է Կարգով սահմանված և Մասնակցին ընձեռնված շտկման հնարավորության ժամանակահատվածը: Որպիսի պայմաններում «Ակորդ գրուպ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն ոչ իրավաչափ է և չի բխում Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջներից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով սահմանված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.07.2020թ.-ի թիվ 26/26-1/10141-2020 գրությամբ «Ակորդ գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/163 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ